https://doi.org/10.46991/S&L/2023.95.140

ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՆՑԱԿԱԶՄԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ[1]

Գևորգ Բարսեղյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ փոխվարչապետի օգնական

a. Քրեաիրավական նորմերի մրցակցությունը և հանցագործությունների բազմակիությունը

Հանցագործությունների բազմակիություն է համարվում միևնույն անձի կողմից երկու կամ ավելի հանցանք կատարելը: Հանցագործությունների բազմակիության տեսակներն են հանցագործությունների համակցությունը և հանցագործությունների ռեցիդիվը (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 51): Պայմանավորված այն հանգամանքով, որ ռեցիդիվի առկայության դեպքում քրեաիրավական նորմերի մրցակցությունը առանձնահատկություններ չունի, սույն աշխատանքում անդրադարձ է կատարվում հանցագործությունների համակցության և քրեաիրավական նորմերի մրցակցության հարաբերակցությանը:

Քրեական իրավունքի գիտությունը հանցագործությունների համակցությունը դասակարգում է իրականի և իդեալականի: Իրական համակցության դեպքում անձը կատարում է երկու կամ ավելի հանցանք առանձին գործողություններով կամ անգործություններով: Իդեալական համակցությունը բնութագրվում է մեկ արարքի կատարմամբ, որը պարունակում է քրեական օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ: ՀՀ քրեական օրենսգրքի[2] (այսուհետ՝ Օրենսգիրք) 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործությունների համակցություն է համարվում միևնույն անձի կողմից մեկ կամ մեկից ավելի արարքներով սույն օրենսգրքով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, եթե նա դրանցից ոչ մեկի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել: Ըստ էության, այս սահմանմամբ տրված է և՛ իդեալական, և՛ իրական համակցության հասկացությունը:

Հանցագործությունների համակցության համար, հանցագործությունների բազմակիությանը բնորոշ ընդհանուր հատկանիշներից բացի, բնութագրական է նաև այն հանգամանքը, որ կատարված հանցանքներից ոչ մեկի համար անձը չպետք է ենթարկված լինի քրեական պատասխանատվության, չպետք է անցած լինեն քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները:

Իդեալական համակցություն, ի տարբերություն իրական համակցության, որպես կանոն, կարող են կազմել օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված հանցանքները: Բացառիկ դեպքերում, երբ նույն հոդվածով նախատեսված են տարբեր հանցանքներ, ապա իդեալական համակցություն կարող են կազմել նաև նույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցանքները[3]:

---

[1] Սույն հոդվածը զեկուցվել է 2022թ. դեկտեմբերի 8-ի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանին:

[2] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունվել է 05.05.2021թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ., ՀՕ-199-Ն: Գործում է:

[3] Այս մասին առավել մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով): Դասագիրք բուհերի համար: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջեր 302, 303:

Առավել բարդ և խնդրահարույց է քրեաիրավական նորմերի մրցակցության տարանջատումը իդեալական համակցությունից: Քրեաիրավական նորմերի մրցակցության և իդեալական համակցության համար ընդհանուրը մեկ արարքի առկայությունն է, որը ընդգրկում է երկու կամ ավելի հանցագործություն: Մրցակցության դեպքում մեկ նորմը մյուսի համեմատությամբ առավել ամբողջական է նկարագրում կատարվածի հատկանիշները, և որակման դեպքում կիրառվում է հենց այդ՝ առավել ընդգրկուն նորմը: Իդեալական համակցության դեպքում կատարվածը չի ընդգրկվում մեկ նորմով, քանի որ հանցագործությունները միավորող արարքի կողքին առկա են էական այնպիսի հատկանիշներ, որնցով այդ հանցագործությունները տարբերվում են:

Քրեաիրավական նորմերի մրցակցությունը բացակայում է, երբ հանցագործությունները միմյանցից տարբերվում են հանցակազմի երկու կամ ավելի հատկանիշներով:

Շարադրվածի կապակցությամբ դիտարկենք անչափահասին հանցանքի կատարմանը հակելու կամ դրան մասնակից դարձնելու (հոդված 238-րդ) և անչափահասին հանցանքի կատարմանը դրդելով կատարված հանցանքի, օրինակ՝ գողության, հարաբերակցությունը (հոդված 46-254-րդ): Հիշատակված հանցակազմերի որոշ հատկանիշների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ հատկանիշներով առավել ընդգրկուն է անչափահասին հանցանքի կատամանը հակելու մասին նորմը, որոշ հատկանիշներով՝ անչափահասին հանցանքի կատարմանը դրդելով կատարված գողության վերաբերյալ նորմը (տե՛ս Գծապատկեր 1): Հետևաբար, այս նորմերը չեն կարող դիտարկվել որպես մրցակցող: Այս նորմերից ոչ մեկը մյուսի համեմատությամբ ո՛չ ըստ ծավալի, ո՛չ ըստ բովանդակության[1] չի կարող համարվել առավել ընդգրկուն: Ուստի, կատարվածը անչափահասին հանցանքի կատամանը հակելու հանցակազմի պարտադիր հատկանիշների առկայության պարագայում անհրաժեշտ է որակել հանցագործությունների իդեալական համակցության կանոններով:



Գծապատկեր 1. Անչափահասին հանցանքի կատարմանը մասնակից դարձնելու և անչափահասի կողմից գողությանը հանցակցելու վերաբերյալ նորմերի հարաբերակցությունը

[1] Ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցությունը ըստ ծավալի ենթակայության տակ գտնվող քրեաիրավական նորմերի փոխհարաբերակցությունն է: Քրեաիրավական նորմերը, որոնք մրցակցում են որպես մաս և ամբողջ, գտնվում են ըստ բովանդակության ենթակայական հարաբերությունների մեջ:

Փոքր-ինչ շեղվելով բուն թեմայից՝ անհրաժեշտ ենք համարում քննարկել «հակել», «ներգրավել» և «մասանկից դարձնել» եզրույթներով նկարագրված հանցանքների ավարման պահի որշման հետ կապված հարցերը:

Այսպես, Օրենսգրքի 238-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում անչափահասին հանցանքի կատարմանը հակելու կամ դրա կատարմանը մասնակից դարձնելու համար 402-րդ հոդվածը՝ **թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների գործածմանը հակելու կամ ներգրավելու համար: «Հակել», «ներգրավել», «մասնակից դարձնել» և «դրդել» հասկացությունների վերլուծությունը թույլ է տալիս կատարել որոշ եզրահանգումներ:**

Թվարկված եզրույթների իմաստների[1] վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ դրանք ըստ բովանդակության նույնական են, և քրեական իրավունքի իմաստով «հակել», «ներգրավել» և «մասնակից դարձնել» հասկացությունները «դրդել» եզրույթի մասնավոր, հատուկ դրսևորումն են, հետևաբար դրանց ավարտի պահը պետք է համընկնի:

Դրդչությունը համարվում է հաջողված կատարողի մոտ հանցանք կատարելու դիտավորություն առաջացնելու և վերջինիս կողմից առնվազն նախապատրաստական գործողություններ կատարելու պահից[2]: Երբ կատարողը տալիս է հանցանք կատարելու համաձայնություն, սակայն դրանից բացի ի կատարումն հանցանքի որևէ բան չի նախաձեռնում, ապա առկա է չհաջողված հանցակցություն, տվյալ դեպքում՝ չհաջողված դրդչություն: Այլ խոսքերով՝ դրդչին, իրենից անկախ հանգամանքներով, չի հաջողվում անձին մղել հանցանքի կատարման: Օրենսգրքի 47-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե հանցագործությունը կազմակերպելուն, դրդելուն կամ օժանդակելուն ուղղված արարքները չեն հաջողվում անձի կամքից անկախ հանգամանքներով, ապա նա պատասխանատվություն է կրում իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձի համար, եթե կատարվել է հանցագործության օբյեկտիվ կողմի մի մասը:

Հաջողված դրդչության վերլուծությունից ելնելով՝ հակումը, ներգրավումը և մասնակից դարձնելը ավարտված պետք է համարվեն հակվողի, ներգրավվողի կամ մասնակից դարձվողի կողմից այն արարքների առնվազն նախապատրաստության կատարման պահից, որոնց համար իրականացվում է ներգրավումը կամ հակումը:

«Հակել», «ներգրավել», «մասնակից դարձնել» եզրույթներով հանցակազմերի օբյեկտիվը կողմը նկարագրված է բարդ արարքի տեսքով, որը բաղկացած է հակողի, ներգրավողի կամ մասնակից դարձնողի և հակվողի, ներգրավվողի կամ մասնակից դարձվողի արարքներից: Բարդ արարքներ ասելով՝ քրեական իրավունքի տեսությունում ընդունված է հասկանալ անձի կողմից հանցանքի կատարում մեխանիզմների, կենդանիների կամ երրորդ անձանց միջոցով[3]: Սակայն որոշ հեղինակներ երրորդ անձանց արարքները դասում են հանցավոր հետևանքների շարքին[4]: Սակայն կարծում ենք՝ չկա որևէ հիմնավորում հակվողի, ներգրավվողի կամ մասնակից դարձվողի արարքները հանցավոր հետևանք դիտարկելու համար: Ընդ որում վերջինիս արարքները կարող են նաև հանցավոր չլինել, օրինակ, երեխային պոռնկության

---

[1] Տե՛ս **Էդ. Աղայան,** Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան», Երևան, 1976, էջեր 312, 795, 1063:

[2] Տե՛ս Курс советского уголовного права / Под ред. А. А. Пионтковского и др. Т. 2. էջ 474, Уголовное право. Общая часть: Учебник / Под ред. И.Я. Козаченко, З.А. Незнамовой. էջ 240.

[3] Տե՛ս Советское уголовное право. Общая часть / Под ред. Н.А. Беляева, М.И. Ковалева. М., 1977. էջ 149, Советское уголовное право. Общая часть / Под ред. Б.В. Здравомыслова, М.А. Гельфера, П.И. Гришаева. М., 1982. էջեր 107 - 109.

[4] Տե՛ս Уголовное право. Особенная часть: Учебник / Под ред. И.Я. Козаченко, З.А. Незнамовой, Г.П. Новоселова. М., 2001. էջ 171.

կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու կամ տարածելու հետ կապված գործողություններ կատարելուն հակելու կամ ներգրավելու (հոդված 239) կամ երեխային հակահասարակական գործողություններ կատարելուն ներգրավելու (հոդված 240) դեպքում: Առանց երրորդ անձի հանցավոր արարքների կարելի է խոսել միայն հանցագործության նախապատրաստության մասին: Այսպիսով, **հակելը, ներգրավելը և հանցանքի կատարմանը մասնակից դարձնելը ավարտված պետք է համարվեն հակվողի, ներգրավվողի կամ մասնակից դարձվողի կողմից այն արարքների առնվազն նախապատրաստության կատարման պահից, որոնց համար իրականացվում է հակումը, ներգրավումը կամ դրանց կատարմանը անձը մասնակից է դարձվում:**

Քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում արարքների որակման տեսանկյունից հետաքրքրական են այն դեպքերը, երբ անձը, շորթում կատարելով, մեկ այլ անձի դրդել է հափշտակություն, օրինակ՝ գողություն կատարելու: Տվյալ դեպքում ևս անձի արարքը պետք է որակվի իդեալական համակցության կանոններով՝ 258-րդ և 46-254-րդ հոդվածներով: Այս հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նորմերից ոչ մեկը չի պարունակում մյուսում առկա բոլոր հատկանիշները. դրդչության իրականացման եղանակները նկարագրված են ընդհանրական կերպով, իսկ շորթման պարագայում՝ հարկադրական եղանակներով՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով, անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նրանց օրինական տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու, վնասելու, վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիքով, շանտաժով կամ հարկադրանքի այլ եղանակով:

Գողության դրդչության դեպքում գողության առարկան ուրիշի գույքն է, շորթման դեպքում առարկան կարող է լինել ինչպես ուրիշի գույքը կամ դրա նկատմամբ իրավունքը, այնպես էլ այն անձինը, ում ներկայացվել է պահանջը:

Հանցագործությունների իդեալական համակցության որոշման դեպքում ընդհանուր օրինաչափությունն այն է, որ նորմերի որոշ հատկանիշներ հարաբերակցվում են որպես «ընդհանուր և հատուկ» նորմեր, իսկ մյուսները, ընդհակառակը, «հատուկ և ընդհանուր» նորմեր կամ նորմ-ամբողջ և նորմ-մաս: Համեմատվող նորմերի առանձին հատկանիշների նշված հարաբերակցությունը թույլ է տալիս քննարկվող հարցը սահմանազատել քրեաիրավական նորմերի բազմակի մրցակցության կանոնների կիրառությունից, քանի որ վերջին դեպքում մեկ նորմը մյուսի հետ համեմատվում է ամբողջությամբ՝ հանցակազմի բոլոր հատկանիշներով: Այսպիսով, հանցագործությունների վերաբերյալ երկու նորմերի հատկանիշների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ հատկանիշներով առավել ամբողջական է մի նորմը, մյուս հատկանիշներով՝ մյուս նորմը: Այսպիսի պայմաններում կատարվածը չի կարող ընդգրկվել մեկ նորմով, ուստի իրավաչափ է կատարվածը հանցագործությունների իդեալական համակցության կանոններով որակելը:

Քրեաիրավական նորմերի մրցակցության և հանցագործությունների իրական համակցության սահմանազատման խնդիրը հազվադեպ է առաջանում: Քրեական իրավունքի տեսությունում վիճելի է այն արարքների որակումը, երբ սկզբում առկա է եղել չավարտված հանցանք, որը հետագայում առանձին արարքով ավարտին է հասցվել:

Կարծում ենք, որ այն դեպքում, երբ սկզբում առկա է եղել չավարտված հանցանք, որը հետագայում առանձին արարքով ավարտին է հասցվել, ապա կատարվածը, մասի և ամբողջի մրցակցության կանոններին համապատասխան, պետք է որակվի որպես ավարտված հանցագործություն:

Երբ անձը չավարտված հանցավոր գործունեության ժամանակ ունեցել է այլ դերակատարում, իսկ հետագայում առանձին արարքով հանցանքը ավարտին

հասցնելիս՝ այլ դերակատարում, ապա պետք է առաջնորդվել հանցանքն ավարտին հասցնելիս ունեցած դերակատարմամբ:

Պետք է նաև նշել, որ քրեական իրավունքի տեսությունում այս հարցի կապակցությամբ առկա է նաև այլ մոտեցում, որով առաջարկվում է բոլոր այն դեպքում, երբ սկզբում առկա է եղել չավարտված հանցանք, որը հետագայում առանձին արարքով ավարտվին է հասցվել, կատարվածը որակել հանցագործությունների իրական համակցության կանոններով[1]: Կարծում ենք՝ այսպիսի մոտեցումը խոցելի է. այն չի բխում մասի և ամբողջի մրցակցության կանոններից:

b. Քրեաիրավական նորմերի մրցակցության սահմանազատումը հարակից հանցակազմերից

Քրեաիրավական նորմերի մրցակցության հարցերի լուծման ընթացքում անհրաժեշտություն է առաջանում նորմերի մրցակցությունը սահմանազատել հարակից հանցակազմերի վերաբերյալ նորմերից: Պրոֆեսոր Կուդրյավցևը հարակից է համարում այն հանցակազմերը, որտեղ մի հանցակազմը պարունակում է հատկանիշ, որը բացակայում է մյուսում, որն էլ իր հերթին ունի հատկանիշ, որը բացակայում է առաջինում:

Այսպիսով, հարակից են այն հանցակազմերը, որոնք միմյանցից տարբերվում են հանցակազմի մեկ կամ մի քանի հատկանիշով՝ մնացած հատկանիշների համընկնման պարագայում: Ընդ որում, տարբերվող հատկանիշը պետք է ունենա այլ նշանակություն, չպետք է գտնվի մասի և ամբողջի կամ ընդհանուրի և հատուկի հարաբերակցության մեջ, հակառակ պարագայում առկա կլինեն մրցակցող և ոչ թե հարակից նորմեր:

Նորմերի մրցակցությունը հարակից հանցակազմերից տարբերվում է նրանով, որ հանցանքի վերաբերյալ մրցակցող (որոնվող[2]) նորմը (հատուկ կամ ամբողջ) միշտ պարունակում է բոլոր հատկանիշները, որոնք առկա են մյուս նորմում (ընդհանուր կամ մաս), և լրացուցիչ հատկանիշ, որը բացակայում է մյուս նորմում:

Օրինակ՝ պետական դավաճանության և լրտեսության վերաբերյալ նորմերը հարակից նորմեր են, որոնք տարբերվում են հանցագործության սուբյեկտի հատկանիշով: ՀՀ քաղաքացին կարող է լինել միայն պետական դավաճանության սուբյեկտ, իսկ օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը կարող է լինել միայն լրտեսության սուբյեկտ: Այս տեսանկյունից հետաքրքրական են այն դեպքերը, երբ օտարերկրյա պետությանը, օտարերկրյա կազմակերպությանը կամ դրանց ներկայացուցիչներին պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ է հանձնում այնպիսի անձ, որը, ՀՀ քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության կամ պետությունների քաղաքացիություն ևս: Հիմք ընդունելով այն, որ ՀՀ քաղաքացիության մասին ՀՀ օրենքի[3] 13.1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի, այն դեպքերում, երբ օտարերկրյա պետությանը, օտարերկրյա կազմակերպությանը կամ դրանց ներկայացուցիչներին պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ է հանձնում այնպիսի անձ, ով ՀՀ քաղաքացիությունից բացի ունի նաև այլ պետության կամ պետությունների քաղաքացիություն ևս, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության պետական դավաճանության համար պատասխանատվություն նախատեսող հոդվածով:

---

[1] Տե՛ս **Иногамова-Хегай Л.В.,** Концептуальные основы конкуренции уголовно-правовых норм: монография. М.: НОРМА, ИНФРА-М, 2019, էջ 188:

[2] Որոնվող նորմ ասելով՝ ընդունված է հասկանալ այն նորմը, որը ենթակա է կիրառման:

[3] Տե՛ս ՀՀ օրենքը ՀՀ քաղաքացիության մասին, ընդունված՝ 06.11.1995, ՀՀԱԺՏ 1995/8, ՀՕ-16:

Տարբերվող հատկանիշները կարող են լինել չեզոք կամ հակասող, փոխբացառող:

Օրինակ՝ գողությունը և կողոպուտը բնութագրվում են կատարման տարբեր եղանակներով, որոնցից մեկի կիրառումը բացառում է մյուսի միաժամանակյա առկայությունը: Հարակից հանցակազմերը, որոնք տարբերվում են հանցանքի կատարման եղանակով, չեն կարող կազմել իդեալական համակցություն:

Հարակից հանցակազմերի վերաբերյալ նորմերը միմյանցից հաճախ տարբերվում են մի քանի հատկանիշով: Օրինակ՝ խարդախությունը և վստահված գույքի հափշտակությունը միմյանցից տարբերվում են և՛ հանցագործության առարկայով, և՛ հանցանքի կատարման օբյեկտիվ կողմով: Վստահված գույքի հափշտակության առարկան հանցավորին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով հանձնված գույքն է, որը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո: Անձին քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելու համատեքստում հարակից են քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելու (հոդված 481) և **ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու** (հոդված 482) **վերաբերյալ նորմերը: Այս նորմերը միմյանցից տարբերվում են հանցագործության սուբյեկտով:**

Քրեաիրավական նորմերի մրցակցության լուծման դեպքում անհրաժեշտ է պարզել՝ նորմերը մրցակցո՞ղ են, թե՞ հարակից: Այս հարցի պարզումից է կախված հանցագործության ճիշտ որակումը:

Հարակից հանցակազմերը, որոնք տարբերվում են չեզոք հատկանիշով, բովանդակությամբ համատեղելի են, ուստի, կարող են կազմել իդեալական համակցություն: Բացառվում է իդեալական համակցությունը հարակից հանցակազմերի, որոնք ունեն արաքի կատարման եղանակով պայմանավորված չհամընկնող հատկանիշ, քանի որ իդեալական համակցություն կարող են կազմել այն հանցանքները, որոնք, ընդհակառակը, կատարվում են մեկ ընդհանուր արարքով: Որպես օրինակ կարող են լինել գողությունը և կողոպուտը, վստահված գույքի հափշտակությունը և խարդախությունը և այլն:

Հարակից են նաև շորթման և ավազակության հանցակազմերի վերաբերյալ նորմերը, որոնք տարբերվում են սպառնալիքի բնույթով և ուղղվածությամբ: Շորթման դեպքում բռնության կիրառման սպառնալիքը ենթակա է իրացման ոչ թե անհապաղ, այլ քիչ թե շատ հեռավոր ապագայում, եթե տուժողը չկատարի շորթողի պահանջները[1]: Ավազակության դեպքում բռնությունը կամ դրա սպառնալիքը գործադրվում է որպես գույքը վերցնելու կամ այն պահելու միջոց, մինչդեռ շորթման դեպքում բռնությունը կամ դրա սպառնալիքը տուժողի կամքի վրա ճնշում գործադրելու միջոց է: Ավազակության ժամանակ գույքին տիրանալը տեղի է ունենում բռնության կամ դրա սպառնալիքի հետ միաժամանակ կամ անմիջապես հետո, իսկ շորթման դեպքում հանցավորը ցանկանում է գույքը ստանալ հետագայում: Ավազակության ժամանակ հանցավորը գույքը վերցնում է գույքը տիրապետողի կամքին հակառակ, իսկ շորթողին տուժողը գույքը հանձնում է իր կամքով, չնայած դրան դիմում է հարկադրված[2]: Շորթման և ավազակության հանցակազմերը միմյանցից կարող են տարբերվել նաև պահանջի կատարման պահով: Ավազակության դեպքում պահանջը ենթակա է անհապաղ կատարման, իսկ շորթման դեպքում պա-

[1] Տե՛ս ՌԴ Գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիայի՝ 1993 թվականի մայիսի 6-ի որոշումը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://dokipedia.ru/document/5297460 02.07.2022

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 396, 397:

հանջը, որպես կանոն, կարող է կատարվել նաև ավելի ուշ: Այսպիսով, բռնության սպառնալիքի հատկանիշով հանցակազմերը իդեալական համակցություն ձևավորել չեն կարող:

Արարքի որակման տեսանկյունից հետաքրքրական են այն դեպքերը, երբ շորթողի պահանջը չի կատարվում, և վերջինս բռնությամբ կամ դրա սպառնալիքով վերցնում է ուրիշի գույքը: Այսպես, եթե շորթում կատարողի պահանջը չի կատարվում, և նա, մերժում ստանալով, անմիջապես բռնություն է գործադրում ու վերցնում գույքը, ապա շորթումը վերածվում է ավազակության: Այս դեպքում արարքը ենթակա է որակման միայն որպես ավազակություն: Եթե շորթողի պահանջը չի կատարվում, և որոշ ժամանակ անց նա բռնությամբ կամ դրա սպառնալիքով վերցնում է ուրիշի գույքը, ապա հանցավորի արարքները ենթական են որակման հանցագործությունների համակցության կանոններով՝ որպես շորթում և ավազակություն:

Բացառվում է հանցագործությունների համակցությունը, որոնք տարբերվում են կատարման վայրով կամ ժամանակով, քանի որ իդեալական համակցության դեպքում ընդհանուր արարքը բնութագրվում է վայրի և ժամանակի միասնությամբ:

Այսպիսով, հանցագործության որակման համար էական նշանակություն ունի այն հանգամանքի պարզումը՝ նորմերը մրցակցո՞ղ են, թե՞ հարակից: Մրցակցության դեպքում միշտ կիրառվում է որոնվող նորմը, իսկ հարակից նորմերի առկայության դեպքում՝ նորմերից մեկը, եթե չհամընկնող հատկանիշներն ունեն հակասող կամ փոխբացառող բնույթ, կամ ձևավորվում է հանցագործությունների իդեալական համակցություն՝ համատեղելի չհամընկնող (չեզոք) հատկանիշներով:

ОСОБЕННОСТИ КОНКУРЕНЦИИ УГОЛОВНО-ПРАВОВЫХ НОРМ ПРИ МНОЖЕСТВЕННОСТИ ПРЕСТУПЛЕНИЙ И СМЕЖНЫХ СОСТАВАХ ПРЕСТУПЛЕНИЙ

Геворг Барсегян
Аспирант кафедры уголовного права
юридического факультета ЕГУ,
Помощник вице-премьера РА

Своей важностью в процессе квалификации преступлений выделяется преодоление конкуренции уголовно-правовых норм. Принципы уголовного права обязывают дать точную уголовно-правовую оценку преступному деянию и в соответствии с совершённым привлечь к уголовной ответственности лицо, совершившее его. Однако, решение проблемы затрудняется из-за некоторых объективных и субъективных обстоятельств.

Конкуренция уголовно-правовых норм – многокомпонентное явление, которое присутствует во всём процессе развития уголовно-правовых отношений - от факта совершения преступления до снятия или погашения судимости. В рамках настоящей статьи затрагиваются особенности конкуренции уголовно-правовых норм при множественности преступлений, а также смежных составах преступлений и их разграничения.

Объект и предмет исследования рассматривались с применением таких общих (общенаучных) и специальных методов научного познания, как догматический, сравнительно-правовой, логический и правового моделирования.

На основе проведённого исследования в статье представлены предложения, имеющие научно-практическое значение с точки зрения множественности преступлений, в частности, идеальной и реальной совокупности преступлений, а также квалификации преступлений в случае смежных составов преступлений.

THE SPECIAL CHARACTERISTICS OF THE COLLISION OF CRIMINAL LAW NORMS IN CASE OF MULTIPLE OFFENSES AND RELATED CRIMES

Gevorg Barseghyan
PhD student at the Chair of criminal law of YSU Law faculty,
Assistant to deputy prime minister

Overcoming the collision of criminal law norms is an important issue in the crime classification process. The principles of criminal law oblige to accurately investigate the criminal conduct and to impose an appropriate criminal liability against those who committed the crime. Addressing the issue, however, remains a rather complex matter due to a series of objective and subjective circumstances.

The collision of criminal law norms is an encompassing phenomenon that is present in the entire process of the development of criminal law relations – from the fact of committing the crime to the removal or nullification of the criminal record. Addressing the issue, however, remains a rather complex matter due to a series of objective and subjective circumstances.

The following article discusses the special characteristics of collision of criminal law norms in case of multiple crimes and related crimes, as well as the distinction between the two.

The subject of the study was examined with the use of general and special scientific methods, such as dogmatic, comparative legal, logical and legal modelling.

Based on the conducted research, the article provides both scientific and practical recommendations in relation to multiplicity of crimes, specifically ideal and real combination of crimes, as well as with regard to qualification of crimes in case of multiple related counts.

Բանալի բառեր – *քրեաիրավական նորմ, քրեաիրավական նորմերի մրցակցություն, հանցագործությունների որակում, հանցագործությունների բազմակիություն, հանցագործությունների իդեալական համակցություն, հանցագործությունների իրական համակցություն, հարակից հանցակազմեր:*

Ключевые слова: *уголовно-правовая норма, конкуренция уголовно-правовых норм, квалификация преступлений, множественность преступлений, идеальная совокупность преступлений, реальная совокупность преступлений, смежные составы преступлений.*

Keywords: *criminal law norm, collision of criminal law norms, qualification of crimes, multiplicity of crimes, ideal combination of crimes, real combination of crimes, multiple related crimes.*